Անհայտ կորած անձանց որոնումը շարունակվում է

ԼՂՀ արտաքին գործերի նախարար Նաիրա Մելքումյանը երեկ ընդունել է Կարմիր Խաչի միջազգային կոմիտեի Ստեփանակերտի գրասենյակի ղեկավար Յուրգ Ֆրեդլիին, որը ներկայացրել է իր կազմակերպության դիրքորոշումը ղարաբաղյան հակամարտության առնչությամբ անհայտ կորած անձանց որոնման հարցի շուրջ: Յ.Ֆրեդլին ԼՂՀ ԱԳՆ ղեկավարին իրազեկել է Լեռնային Ղարաբաղում ԿԽՄԿ ծրագրերի իրագործման ընթացքի մասին եւ պատմել կազմակերպության հեռանկարային ծրագրերի մասին:

ԼՂՀ արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարը նշել է, որ անհայտ կորած անձանց որոնումը կարելի է դիտարկել նաեւ որպես հակամարտող կողմերի միջեւ վստահության հաստատման միջոց: